ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

4001, ք. Իջևան Նալբանդյան փողոց 71, հեռ. 0263- 4-08-41, 4-00-43, էլ. փոստ՝ tavush@court.am

№ ԴԴԱ-15-Ե- 18269/25

«15» սեպտեմբեր 2025թ.

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի տարեկան նախահաշվում կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 19.02.2025 թվականին կնքված թիվ PDU-125-01-25 պայմանագրի գումարը դարձել է 29022800 ՀՀ դրամ:

Կից Ձեզ եմ ուղարկում ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 19.02.2025 թվականին կնքված թիվ PDU-125-01-25 փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ 15.09.2025 թվականի թիվ 1 լրացուցիչ համաձայնագրի պատճենը:

Խնդրում եմ Ձեզ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը «Քլիենթ Թրեժիր» ծրագրով փոփոխել դրական եզրակացությունը:

Առդիր «1» թերթ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՂԵԿԱՎԱՐ Ա.ԺԱՄՀԱՐՅԱՆ

Կատարող՝գլխավոր հաշվապահ
Արմինե Եգանյան

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **15.09.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Արման Ժամհարյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 19 662 800 (տասնինը միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 29 022 800 (քսանինը միլիոն քսաներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-125-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Պատվիրատու՝

Տավուշի մարզի առաջին ատյանի ԸԻԴ
ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900371001281
Հեռ.՝ (0263) 4-08-41

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
փոստային պրոդուկտների վարչության
ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝

Արման Ժամհարյան ----------
/ստորագրություն/